

# ՍԱՂՄՈՍ 75

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստված նվաստացնում է հպարտին, սակայն մեծարում է արդարին	Գոհություն Աստծո արդար դատատանի համար	Ազգային գովարանություն Աստծո հզոր գործերի համար	Աստված Դատավորը	Տիեզերական Դատավորը
<u>MT ներածություն</u>				
Գլխավոր երաժշտին, Ասափի սաղմոսը կամ երգը				
75:1-5	75:1	75:1	75:1	75:1
	75:2-3	75:2-5	75:2-5	75:2-3
	75:4-5			75:4-5
75:6-8	75:6-8	75:6-9	75:6-8	75:6-8
75:9-10	75:9		75:9-10	75:9-10
	75:10	75:10		

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

### ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Դժվար է հասկանալ, թե երբ է սաղմոսերգուն խոսում, իսկ երբ է նա խոսում Աստծո փոխարեն:

1. Սաղմ. 75:1 – ակնհայտորեն՝ սաղմոսերգուն
2. Սաղմ. 75:2-3 – ակնհայտորեն՝ Աստված
3. Սաղմ. 75:4-5 – կարող է երկուսն էլ լինել
4. Սաղմ. 75:6-8 – սաղմոսերգուն
5. Սաղմ. 75:9 – Աստված (MT –«Ես»)

- Բ. Աստված գործում է և ապա Նրա գործերը պետք է արձանագրվեն և բացատրվեն (այսինքն՝ ներշնչանքը) մարդկային հեղինակներին, որպեսզի այս հայտնությանը տեսք տան, որը կփոխանցվի ապագա սերունդներին (այսինքն՝ բանավոր, գրավոր, պատմություններ):
- Գ. Արարիչը հաշիվ է պահանջելու յուրաքանչյուր մարդ էակից իր կյանքի պարզևի և հայտնության տնտեսվարության համար (տես՝ Սաղմ. 19:1-6,7-11): Մի օր արդարությունը կհաղթանակի:

**ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 75:1-5**  
<sup>1</sup>Գոհություն ենք մատուցում Քեզ, ո՛վ Աստված,  
 Գոհություն ենք մատուցում Քեզ,  
 Քո հրաշալի գործերը հռչակում են, որ Քո անունը մոտ է:  
<sup>2</sup>Երբ ժամը հասնի, ուղիղ դատաստան են տեսնելու:  
<sup>3</sup>Երկիրն ու բոլոր նրա բնակիչները մաշվեցին .  
 Նրա սյուները ես հաստատեցի: Սելա:  
<sup>4</sup>Անմիտներին ասացի. «Հիմարաբար մի՛ վարվեք»  
 Ու ամբարիշտներին՝ «Եղջուր մի՛ բարձրացրեք:  
<sup>5</sup>Ձեր եղջուրները վեր մի՛ բարձրացրեք:  
 Մի՛ խոսեք կարծրացրած պարանոցով»:

**75:1 «Գոհություն ենք մատուցում»** Այս ԲԱՅԸ (BDB 392, KB 389, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱԲ) կրկնվում է երկու անգամ՝ ավելի շեշտադրված լինելու համար (տես՝ Սաղմ. 107:1,8,15,21,31): *Hiphil* տարբերակով տերմինը շատ հաճախ է կիրառվում (65 անգամ) Սաղմոսներում: Այն հիմնականում թարգմանվում է որպես «փառաբանություն», սակայն Սաղմ.32:5-ում այն թարգմանվում է «խոստովանել»:

❖  
**NASB, NKJV, NRSV**            «քանի որ Քո անունը մոտ է»  
**NJB, RSV, Peshitta, LXX**    «մենք քո անունն ենք կանչում»  
**JPSOA**                            «Քո ներկայությունը մոտ է»

MT-ին հետևում է NASB-ը: UBS Տեքստային Նախագիծը (Էջ՝ 326) գնահատում է երկրորդ տարբերակը “C” (բավականին կասկածելի), սակայն ընդունում է այն որպես ամենահավանական բնագիր տեքստը:

- Խնդիրն այն է, թե ի՞նչ է նշանակում «և Քո անունը մոտ է» խոսքը:
1. մենք պատմում ենք Քո ներկայության մասին Քո ժողովրդին ազատության գործերով
  2. Դու (այսինքն՝ «Քո անունը», որը հավասար է ՅԱՀՎԵԻ անձնական ներկայությանը) հիմա մոտ ես և մենք կարող ենք ակնկալել Քո գործողությունը (Իսրայելի մեղքի պատճառով ՅԱՀՎԵՆ միշտ չէ, որ ազատում էր նրանց)
  3. մենք կանչում ենք Քո անունը և պատմում, թե ինչեր ես արել ուխտի ժողովրդի համար (երկու տարբեր գործեր)
  4. AB այն դարձնում է Աստծո համար որպես անուն՝ «Օ, Մոտ Եղող», ինչպես որ անում է հետևյալ դեպքերում՝
    - ա. «Մեծարվածը»՝ Սաղմ. 75:5ա
    - բ. «Հաղթանակողը»՝ Սաղմ. 75:6 (երկու անգամ)
    - գ. «Հավիտենականը»՝ Սաղմ. 74:9
    - դ. «Արդարը»՝ Սաղմ. 74:10

AB պնդում է, որ այս Սաղմոսում առկա են Աստծո տասներկու անուններ:

❖ «մարդիկ հռչակում են Քո հրաշալի գործերը» Երբ Իսրայելը սովորեցնում էր իր գավակներին իրենց նախահայրերի և Աստծո խոստումների մասին (տես՝ 2 Օրինաց 4:9,10, 6:7,20-25, 11:19, 32:46), նրանք փոխանցում էին խոստումներն ու դրանց իրականացումները հաջորդ սերնդին: Այս «հրաշալի գործերը» (BDB 810, KB 927, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ .ՀՐԱՇԱԼԻ ԲԱՆԵՐ) ազատագրման, պաշտպանության և հոգատարության հզոր գործերն էին, որ Իսրայելը վերապրել էր իր պատմության ընթացքում:

ՅԱՀՎԵԻ բնավորության, խոստումների և հավատարիմ միջամտության այս հայտնությունը միջոց էր՝

1. Իսրայելի հավատքի մեջ պահելու համար
2. ազգերին հավատքի բերելու համար

NIDOTTE, հատոր 3, էջ՝ 284, թվարկում է Աստծո գործերը նկարագրող տարբեր բառեր, որոնք հայտնում են Նրա բնավորությունը՝

1. հրաշքներ, տես՝ Սաղմ .9:1, 26:7, 40:5, 75:1
2. գործեր, տես՝ Սաղմ .44:1, 73:28, 107:22, 118:17
3. փառք, տես՝ Սաղմ .96:3
4. արդարություն, տես՝ Սաղմ .71:15
5. հավատարիմ սեր, տես՝ Սաղմ .88:11
6. մեծություն, տես՝ Սաղմ .145:6

**75:2-5 «Երբ ժամը հասնի»** Այս համարներում Աստված է խոսողը: Հնարավոր է, որ սա առնչվում է Սաղմ .74:22-23-ի հետ (այսինքն՝ Աստված պաշտպանում է Իր գործը):

**75:2 «Ես ընտրում եմ ժամանակը / երբ ժամը հասնի»** Սա գրական մի կերպ է, որով հաստատվում է Աստծո ինքնիշխանությունը: Նա է նշանակում աշխարհում տեղի ունեցող դեպքերի ժամանակն ու վայրերը (այսինքն՝ Սաղմ .74:12-17, 2 Օրինաց 32:8, Հռոմեացիների 9-11):

1. եղանակները – Ծննդ .1:14-18, Սաղմ .72:17, 74:16-17, 104:19, 136:7-8
2. պաշտամունքի օրերը – Ծննդ .2:3, Ելից 20:8-11, Ղևտացիների 23, Թվոց 28-29
3. ամեն ինչ Աստծո կողմից է նշանակված – Ժող .3:1-11 (տես՝ Հոբ 14:5, Սաղմ .31:15 Գործք 17:31)

Աստծո ժողովուրդը չեն հասկանում Նրա ժամանակացույցը: Նա ազատում է Իր գրաֆիկի համաձայն, ոչ թե Իր ժողովրդի: Հաճախ դատաստանը, անգամ նվաճումը, Նրա կամքն է: Մի օր սակայն, Նա ամեն ինչ շտկելու է:

❖ «ուղիղ դատաստան եմ տեսնելու» Աստվածաբանական կետերը հաստատվում են՝

1. Աստված դատելու է երկիրը
2. Նա այդ անելու է բացառապես հիմնված Իր հայտնության վրա (տես՝ Սաղմ .9:8, 58:11, 67:4, 96:10, 13, 98:9):

**75:3 «Երկիրն ու նրա բոլոր բնակիչները մաշվեցին»** ԲԱՅԱԿԱՆ բառը (BDB 556, KB 555, *Niphal* ԴԵՐԲԱՅ, տես՝ Ելից 15:15, Հեսու 2:9,24, 1 Թագ .14:16, Ես .14:32, Երեմ .49:23) արտահայտում է բնակչության վախը:

Ոչ միայն մարդկանց սրտերը հավեցին, այլ հենց երկիրն ինքը ազդվում է իր Արարչի՝ Դատավորի ներկայությունից (տես՝ Սաղմ .46:6, Ես .24:19-20, Ամովս 9:5, Միքիա 1:4, Նաում 1:5):

ՆԿ-ում՝ 2 Պետրոս 3:10-ում կանխասվում է այս մոլորակի տարրալուծվելը (տես՝ Մատթ .5:18, 24:35, Հայտն .21:1):

Նոր երկինք ու նոր երկիր է սպասվում: Երեմ .31:31-34-ի նոր ուխտը կատարելապես իրագործվելու են: Աստվածաշունչն այս նոր դարաշրջանը նկարագրում է Եդեմի Պարտեզի նկարագրության տերմիններով (համեմատեք Ծննդոց 1-2 Հայտնություն 21-22-ի հետ):

❖ «նրա սյունները ես հաստատեցի» Սա երկրի հիմքերը նկատի ունեցող գրական կրեպ է (այսինքն՝ սկզբնական արարչագործությունը, տես՝ 1 Թագ. 2:8, Հոր 38:4-6):

Հովնան 2:6-ում «լեռների հիմքերը» նույնպես ստեղծագործության նկարագրություն է: Տես իմ գրառումները Հովնան 2:6-ից:

**Հովնան 2:6 «Ես լեռների հիմքերի մոտ իջա»** ՀԿ-ը գործածում է ֆիզիկական ուղղություն դեպի «ցած» նկարագրելու *Շեղը* (BDB 432, KB 434, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Թվոց 16:30,33, Սաղմ. 55:15, Ես. 5:14, 14:19): *Շեղ* տերմինը և «գուրը» (BDB 1001) զուգահեռներ են (տես՝ Սաղմ. 30:3): Հովնանի կողմից հանդերձյալ կյանքի մոտեցման այդ զգացողության խորհրդավոր արտահայտումն է, որ այս փորձառությունը դարձնում է Հիսուսի մեկնաբանության առարկան (տես՝ Մատթ. 12:40-41, Դուկաս 11:30): Հովնանը հավատում էր, որ շուտով մեռնելու է, սակայն Աստված ողորմեց նրան: Աստծո դատաստանը Նրա վերջին խոսքը չէր: Այդ պատժի մեջ նպատակ կար:

Սաղմոսերգուն և ուխտի ժողովուրդը չէին հասկանում, թե ինչու էին նմանատիպ դժվարություններ կրում, երբ գիտեին, որ իրենց Աստվածն է ամեն ինչ վերահսկում: Անգամ քառսի, հարձակումների և անարդարության մեջ, Աստծո գերիշխանությունը կայուն էր և հաստատ (տես՝ Հայտնություն 4-5): Նրա ժամանակացույցը արագություն է բացել դեպի Իր ավելի ընդարձակ նպատակները, ոչ թե մեր անմիջական ցանկությունները, կարիքները:

❖ «Սեյա» Տես՝ Սաղմոս 3:2 և Սաղմոսների Ներածություն VII.

**75:4-5** Արարիչը խոսում է որպես բարոյականության առաջնորդ: ՅԱՀՎԵԻ օրենքները արտացոլում են Նրա բնավորությունը: Նրանք, ովքեր առերեսվում են Նրա դատաստանի հետ, այն մարդիկ էին, ովքեր՝

1. պարծենում են – «մի՛ պարծեցիր», BDB 237, KB 248, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
2. ամբարիշտ – «եղջյուր մի՛ բարձրացրեք», BDB 926, KB 1202 (երկու անգամ), *Hiphil* ԱՆԿԱՏԱՐՆԵՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
3. հպարտ – «մի՛ խոսեք. . .», BDB 180, KB 210, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով

Թվում է, թե այս Սաղմոսի «ամբարիշտները» (Սաղմ. 75:4) այս մարդիկ են՝

1. հեթանոս ազգերը, որոնք փորձում են զավթել
2. ամբարտավան իսրայելացիները (տես՝ Սաղմ. 78:3,8-9, 18-19)

**75:4 «եղջյուր»** Սա կենդանու սիմվոլ է՝ գործության և ամենակարողության (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՍԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵՂՋՅՈՒՐՆԵՐԸ, տես՝ Սաղմ. 75:10, 1 Թագ. 2:1, 10, Դանիել 7-8):

**75:5**

**NASB** «հպարտություն»

**NKJV, NRSV, Peshitta** «պարանոց»

**NEB, LXX** «վեմ»

MT տալիս «պարանոց» (BDB 848): REB տալիս է «վեմ»: Երկու բառերը շատ նման են (այսինքն՝ «վեմ» բառը մի բաղաձայն ավել է): Հավանաբար REB արտացոլում է Հոր 15:26-ի կիրառությունը: UBS Տեքստային Նախագիծը (Էջ՝ 326) տալիս է «պարանոց» բառին “C” գնահատական (բավականին կասկածելի): JPSOA տարբերակը տալիս է «ունայն բամբասանք»:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 75:6-8**

**<sup>6</sup>Քանի որ մեծությունը ո՛չ արևելքից է գալիս,**

**ո՛չ արևմուտքից, ո՛չ էլ անապատից,**

**<sup>7</sup>Այլ Աստված է դատավոր. մեկին ցածրացնում է,**

**Մյուսին՝ բարձրացնում:**

**Քանի որ Տիրոջ ձեռքին բաժակ կա,**

**Ու գինին կարմիր է: Այն խառնուրդով լի է,**

**Ու այնտեղից թափում է, և երկրի բոլոր մեղավորները**

**Դրա մրուրները քամելով խմելու են:**

**75:6-8** Այս պարբերությունը արտացոլում է ՅԱՀՎԵԻ տիեզերական ներկայությունը, ճիշտ ինչպես Սաղմոս 139, սակայն այստեղ համատեքստը կենտրոնանում է ամբարիշտների հանդեպ Նրա դատաստանի վրա (տես՝ Սաղմ. 75:4-5):

Հանախ թվում է, թե ամբարիշտներն ունեն վերջին խոսքի իրավունքը, սակայն Աստված Ինքը ամեն բան կշտկի (տես՝ Սաղմ. 146:7, 1 Թագ. 2:7, Հռոմեացիների 9, Հակոբոս 4:10): Այս գերբնական գործողությունը կլինի ակնկալիքների հակադարձումը:

**75:6** Այս համարը կիրառում է Պաղեստինյան՝ Քանանացիների նկարագրություն՝ հաստատելու համընդհանրություն:

1. արևելք – արևմուտք
2. արևածագ – մայրամուտ
3. անապատ (հարավ) – սարեր (կամ «բարձունքներ»), որոնք մատնանշում են հյուսիսը

**75:8 «բաժակ»** Սա սովորաբար մարդու ճակատագրի համար կիրառվող դարձվածք է և սովորաբար բացասական իմաստով (տես՝ Եսայի 51:17,22, Երեմ. 25:15-16, 27-28): Տես ամբողջական գրառումը Սաղմ. 11:6-ում:

❖ **«այն խառնուրդով լի է»** Սա վերաբերում է տարբեր տեսակի մրգերի և հացահատիկների խմորման խառնուրդի հնագույն մեթոդին, որով պատրաստում էին ավելի արբեցնող խմիչքներ:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱԼԿՈՀՈՒՐ ԵՎ ԱԼԿՈՀՈՒԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ  
SPECIAL TOPIC: ALCOHOL AND ALCOHOL ABUSE**

**I. Աստվածաշնչյան տերմինները**

**Ա. Հին Կտակարան**

1. *Yayin* – Սա հունարեն գինի բառի ընդհանուր տերմինն է (BDB 406), որը կիրառվել է 141 անգամ: Ստուգաբանությունը անհայտ է, քանի որ ունի Եբրայերեն արմատ: Այն միշտ նշանակում է թթվեցրած պտղաջուր՝ հիմնականում խաղողի: Տիպիկ սուրբգրային հատվածներն են՝ Ծննդ. 9:21, Ելից 29:40, Թվոց 15:5,10:
2. *Tirosh* – Սա «նոր գինին» է (BDB 440): Մերձավոր Արևելքի կլիմայական պայմանների պատճառով թթվեցումը /խմորվելը/ սկսում էր հյուսիս քամելուց վեց ժամ անց: Այս տերմինը վերաբերում է թթվեցման ընթացքի մեջ գտնվող գինուն: Մի քանի տիպիկ սուրբգրային հատվածների համար նայեք 2 Օր. 12:17, 18:4, Ես. 62:8-9, Ովս. 4:11.
3. *Asis* – Ակնհայտ է, որ սա ակոհոլային ընպելիք է («քաղցր գինի» BDB 779, օր.՝ Հովել 1:5, Ես. 49:26):
4. *Sekar* – Սա «ուժեղ խմիչք» տերմինն է (BDB 1016): Եբրայերեն արմատը կիրառվում է «հարբած» կամ «հարբեցող» տերմինում: Այն իր մեջ պարունակում է ավելացված մի բան, որը ավելի է ակոհոլացնում: Այն *yayin* բառի հոմանիշն է (տես՝ Առակ. 20:1, 31:6, Ես. 28:7):

**Բ. Նոր Կտակարան**

1. *Oinos* – *yayin* բառի հունարեն համարժեքը
2. *Neos oinos* (նոր գինի) – *tirosh* բառի հունարեն համարժեքը (տես՝ Մարկ. 2:22).
3. *Gleuchos vinos* (քաղցր գինի, *asis*) – Թթվեցման սկզբնական փուլում գտնվող գինի (տես՝ Գործք 2:13):

## II. Աստվածաշնչյան կիրառությունը

### Ա. Հին Կտակարան

1. Գինին Աստծո պարզևն է (Ծննդ.27:28, Սաղմ.104:14-15, Ժող.9:7, Ովս.2:8-9, Հովել 2:19,24, Ամովս 9:13, Չաք.10:7):
2. Գինին զոհաբերության մի մասն է կազմում (Ելից 29:40, Ղևտ.23:13, Թվոց 15:7,10, 28:14, 2 Օր.14:26, Դատ.9:13):
3. Գինին օգտագործվում էր որպես դեղամիջոց (2 Թագ.16:2, Առակ.31:6-7):
4. Գինին կարող է իսկական պրոբլեմ լինել (Նոյ՝ Ծննդ.9:21, Ղովտ՝ Ծննդ.19:33,35, Նարադ՝ 1 Թագ.25:36, Ուրիա՝ 2 Թագ.11:13, Ամնոն՝ 2 Թագ.13:28, Հեղի՝ 3 Թագ.16:9, Benhadad – Բենադադ՝ 3 Թագ.20:12, Իշխանները՝ Ամովս 6:6 և Կանայք՝ Ամովս 4):
5. Գինին կարող է չարաշահվել (Առակ.20:1, 23:29-35, 31:4-5, Ես.5:11,22, 19:14, 28:7-8, Ովս.4:11):
6. Գինին արգելված է որոշ խմբի մարդկանց (ծառայության մեջ գտնվող քահանաները՝ Ղևտ.10:9, Եզեկ.44:21, Ուխտավորները՝ Թվոց 6, և իշխանները՝ Առակ.31:4-5, Եսայի 56:11-12, Ովս.7:5):
7. Գինին օգտագործվում է էսկատոլոգիական միջավայրում (Ամովս 9:13, Հովել 3:18, Չաք.9:17):

### Բ. Միջաստվածաշնչյան

1. Չափավոր գինին շատ օգտակար է (Ժող.31:27-30):
2. Ռաբբիներն ասում են. «Գինին դեղամիջոցներից ամենալավն է, որտեղ չկա գինի, այնտեղ կարիք կա դեղերի» (Բարա Բաթրա 58բ):

### Գ. Նոր Կտակարան

1. Հիսուսը մեծ քանակությամբ ջուրը վերածեց գինու (Հովհ.2:1-11):
2. Հիսուսը գինի խմեց (Մատթ.11:18-19, Ղուկ.7:33-34, 22:17):
3. Պետրոսը մեղադրվեց «նոր գինով» գինովցած լինելու մեջ՝ Պենտեկոստեի օրը (Գործք 2:13):
4. Գինին կարելի է օգտագործել որպես դեղամիջոց (Մարկ.15:23, Ղուկ.10:34, 1 Տիմ. 5:23):
5. Առաջնորդները չպետք է չարաշահեն գինին: Սա չի նշանակում, որ ամբողջովին զրկվեն դրանից (1 Տիմ.3:3,8, Տիտ.1:7, 2:3, 1 Պետ.4:3):
6. Գինին կիրառվում է էսկատոլոգիական միջավայրում (Մատթ.22:1գ, Հայտն.19:9):
7. Հարբեցողությունը դատապարտված է (Մատթ.24:49, Ղուկ.12:45, 21:34, 1 Կորնթ. 5:11-13, 6:10, Գաղ.5:21, 1 Պետ.4:3, Հռոմ.13:13-14):

## III. Աստվածաբանական հասկացությունը

### Ա. Բարբառային լարվածությունը

1. Գինին Աստծո պարզևն է:
2. Հարբեցողությունը մեծ պրոբլեմ է:
3. Որոշ մշակույթներում հավատացյալները պետք է սահմանափակեն իրենց ազատությունը հանուն ավետարանի (Մատթ.15:1-20, Մարկ.7:1-23, 1 Կորնթ.8-10, Հռոմ.14):

### Բ. Տրված սահմաններն անցնելու հակվածությունը

1. Աստված է բոլոր բարիքների աղբյուրը:
2. Անկում ապրած մարդկությունը չարաշահել է Աստծուց տրված բոլոր պարզևները՝ դրանք տանելով Աստծո կողմից դրված սահմաններից դուրս:

- Գ. Չարաշահումը մեր մեջ է և ոչ թե իրերի: Ֆիզիկական արարչագործության մեջ ոչ մի չար բան չկա (տես՝ Մարկ.7:18-23, Հռոմ.14:14, 20, 1 Կորնթ.10:25-26, 1 Տիմ.4:4, Տիտ.1:15):

## IV. Առաջին դարի հրեական մշակույթը և խմորումը

- Ա. Խմորումը սկսում է շատ շուտով՝ խաղողը տրորվելուց մոտ վեց ժամ հետո:
- Բ. Հրեական ավանդույթն ասում է, որ մակերևույթին թեթև փրփուր է երևում (խմորման նշան), ապա այն ենթակա է գինու տասանորդի (*Ma aseroth 1:7*): Այն կոչվում էր «նոր գինի» կամ «քաղցր գինի»:
- Գ. Սկզբնական ուժեղ խմորումը ավարտվում էր մեկ շաբաթ անց:
- Դ. Երկրորդ խմորումը տևում էր մոտ քառասուն օր: Այս վիճակում այն համարվում էր «հին գինի» և կարող էր մատուցվել գոհասեղանի վրա (*Edhuyyoth 6:1*):
- Ե. Գինին, որը հանգստանում էր իր մրուրի մեջ (հին գինին) համարվում էր լավ գինի, սակայն օգտագործումից առաջ պետք է լավ քամվեր:
- Զ. Գինին համարվում էր պատշաճ կերպով հնեցված, սովորաբար մեկ տարի խմորումից հետո: Երեք տարին ամենաերկար ժամանակն էր, որ կարող էր ապահով պահվել: Այն կոչվում էր «հին գինի» և պետք է նոսրացվեր ջուր խառնելու միջոցով:
- Է. Միայն վերջին 100 տարիներին է, որ ստերիլ միջավայրի և քիմիական հավելումների շնորհիվ հնարավոր է դարձել խմորման ժամկետը երկարացնել: Հնագույն ժամանակներում մարդիկ չեն կարողացել կանգնեցնել բնական խմորման ընթացքը:

**V. Եզրահանգում**

- Ա. Համոզվեք, որ ձեր փորձառությունը, աստվածաբանությունը և սուրբգրային մեկնաբանությունը չի թերագնահատում Հիսուսին և առաջին դարի հրեական/Քրիստոնեական մշակույթը: Նրանք հաստատ լիակատար ժուժկայներ չէին:
- Բ. Ես չեմ պաշտպանում ակոհոլի հասարակական օգտագործումը: Ամեն դեպքում, շատերը չափազանցեցրել են այս թեմայի շուրջ Աստվածաշնչի դիրքորոշումը և այժմ պահանջում են գերազանց արդարություն մշակութային՝ հարանվանական հակվածությամբ:
- Գ. Ինձ համար Հռոմեացիների 14 և 1 Կորնթացիների 8-10 հատվածները ապահովում են իմ հավատակիցների և մեր մշակույթի մեջ ավետարանի տարածման համար սիրո և հարգանքի հիման վրա խորաթափանցություն և ուղեցույց, ոչ թե անձնական ազատություն կամ դատելու քննադատություն: Եթե Աստվածաշունչը հավատքի և ապրելու համար միակ աղբյուրն է, ապա հնարավոր է մենք բոլորս պետք է ևս մեկ անգամ մտածենք այս հարցի շուրջ:
- Դ. Եթե մենք համոզվենք, որ կատարելապես ժուժկալ լինելը Աստծո կամքն է, ապա դրանով ի՞նչ կակնարկենք Հիսուսի մասին, ինչպես նաև այն արդի մշակույթների, որոնք պարբերաբար օգտագործում են գինի (օր.՝ Եվրոպան, Իսրայելը, Արգենտինան):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 75:9-10**

- <sup>9</sup>Բայց ես հավիտյան գովելու եմ,
- Փառաբանություն եմ երգելու Հակոբի Աստծուն:**
- <sup>10</sup>Ամբարիշտների բոլոր եղջյուրները պիտի փշրեմ,
- Իսկ արդարի եղջյուրները պիտի բարձրանան:**

**75:9-10** Այս պարբերությունը սաղմոսերգուի փակման խոսքերն են .

1. նա հռչակելու է ՅԱՀՎԵԻ հրաշալի գործերը (տես՝ Սաղմ. 75:1):
2. նա փառաբանություններ է երգելու Հակոբի Աստծուն
3. նա հաստատելու է ՅԱՀՎԵԻ արդար դատաստանի հակադարձումը

Սա արտացոլում է տանարում պաշտամունքի միջավայր:

**75:9** MT տալիս է «ես հռչակելու եմ», սակայն LXX և Փեշիտտա տարբերակները տալիս են «ես ցնձալու եմ» (տես՝ NRSV): Տարբերությունը միայն մեկ բաղաձայն է: LXX փորձում է հաստատել համագոր գուգահեռականություն Սաղմոս 75:9ա-ի և 9բ-ի միջև:

**75:10 «Նա պիտի փշրի»** MT տալիս է «Ես պիտի. . .»: UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 328) տալիս է “A” գնահատական:

Աս Սաղմոսն ունի մի քանի խոսնակ: Հավանաբար Սաղմ.75:9 սաղմոսերգուն է և 75:10՝ ՅԱՀՎԵՆ:

❖ **«եղջյուրները»** Ուշադրություն դարձրեք, որ այս դարձվածքը կարող է կիրառվել դրական կամ բացասական իմաստով (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ.ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵՂՋՅՈՒՐՆԵՐԸ):

1. բացասական, տես՝ Սաղմ. 75:4-5, 10ա, Երեմ. 48:25, Ողբ 2:17
2. դրական, տես՝ Սաղմ. 75:10բ, 1 Թագ. 2:1,10, Սաղմ. 89:17,24, 92:10, 112:9:

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվարկե՛ք այս Սաղմոսի տարբեր խոսնակներին:
2. Արդյո՞ք այս Սաղմոսը մեծարում է Աստծուն որպես Արարչի, թե՞ որպես Դատավորի:
3. Բացատրեք հետևյալ նկարագրությունները՝
  - ա. «սյուներ»
  - բ. «եղջյուր»
  - գ. «բաժակ»
4. Արդյո՞ք այս Սաղմոսը մատնացույց է անում ժամանակավոր դատաստան, թե վերջին ժամանակի դատաստանը: